ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 318-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-004-0020-0036 ԾԱԾԿԱԳՐԻ 0.01795 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականիհոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետերի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 21-ի թիվ 62-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2024 թվականի հուլիսի 30-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 26 արձանագրությունը, ըստ որի 2024 թվականի հուլիսի 4-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքում գտնվող 06-004-0020-0036 կադաստրային ծածկագրի 0.01795 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Աշխեն Մամիկոնի Գալստյանը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0020-0036 կադաստրային ծածկագրի 0.01795 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, օտարել Աշխեն Մամիկոնի Գալստյանին՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 535500 (հինգ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265123274 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. օգոստոսի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 319-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հատատելու մասին>> N 12-Ն Հրամանով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. մարտի 14-ի թիվ 58-Ա որոշումը, Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի թիվ 12-Ա որոշումը և Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024թ. օգոստոսի 07-ի թիվ 05/107.4/06408-2024 գրությունը՝

Որոշում եմ.

1.Հաստատել Թումանյան համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը.
1) Թումանյան Սուրեն - համայնքի ղեկավար,հանձնաժողովի նախագահ,
2) Խեչումյան Միեր - մարզպետարանի ներկայացուցիչ,
3) Դալլաքյան Մերի - _____//_____
4) Մարկոսյան Սամվել- _____//_____
5) Շաքարյան Ռոման - ավագանու անդամ,
6) Խաչիկյան Գոհարիկ - _____//_____
7) Վանյան Հրանուշ- _____//_____
2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. մարտի 14-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին>> թիվ 59-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. օգոստոսի 08
ք.Թումանյան